# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"3" ապրիլի 2013թ. № 38-Ա

**ՔԱՋԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ**
**ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի ա/ ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2013թվականի մարտի 22-ի N 2015-Ա որոշման 2-րդ կետի, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

2013 թվականի մարտի 20-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդում մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանի պետի (ծածկագիր՝ 68-2.1-6) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար կայացած մրցույթի հարցազրույցի փուլի գնահատման ընթացքում դրսևորած սուբյեկտիվ վերաբերմունքի, մասնակցին հուշելու, սխալ պատասխանները ճիշտ կամ թերի գնահատելու համար մրցութային հանձնաժողովի անդամ, ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական Քաջիկ Խաչատրյանի նկատմամբ կիրառել «նախազգուշացում» կարգապահական տույժը:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2013թվականի մարտի 22-ի N 2015-Ա որոշումը, Ք. Խաչատրյանի գրավոր բացատրությունը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ.ապրիլի 3
ք. Կապան